Դանիել Վարուժան

Սանդուռնական

Այս իրիկուն նորեն Քաղաքն հեշտանքի,
Ծովափին վրա, գոհարազարդ բոզի պես,
Անթիվ ջահերն իր կը վառե: Երբ տակավ
Հրորնդյունները սրղոցին կը լռեն,
Եվ սալին վրա մուրճերն ալ չե՛ն կայծկըլտար,
Ան՝ խորտակված սափորեն հանկա՛րծ թափվող
Հին գինիի մը նըման՝
Կը փըրփըրի, կը պըղպըջա իր կարմիր
Կիրքերուն մեջ: Երեկոյան խորշակով
Բըլուրներեն այգեվետ
Հոտ մ'ողկույզի փողոցներն հորդ կը լեցնե,
Ու կըծու աղը ծովուն
Կու գա ռունգերը գըրգըռել կըտղուցի.
Այն ժամանակ մեհյաններեն դուրս կ'ելլեն
Քըրմուհիներ սանդուռնական տոներուն.
Կ'անցնին կիներ՝ վարդ դըրած
Իրենց քունքին ու գոտիին վրա արծաթ.
Կ'անցնին մարդիկ, նըվագներով ու պարով.
Պոռնիկ մ'հանկարծ, անոնց մեջ,
Կ'արձակե հերքն իր կըրունկները մինչև,
Եվ լողալով գանգուրներուն ծովին մեջ,
Կը ծիծաղի՜, կը ծիծաղի՜ խելահեղ
Երեսն ի վեր քարձ կավատի մը հարբած:

Յատուկ Պոեմ

Քաղքին պատերն ամբարիշտ
Կարմրաշառայլ լույսով մ'ամբողջ ծեփված են.
Եվ նրոնենին, լապտերներով պաճուճված,
Պատրշգամբին տակ կը ծաղկի հեշտօրոր:
Սլարկներեն վար գինինե՛ր կը հոսին.
Տան շեմերն են թրրջրված
Մամացներով ու մաղձով
Դուռներեն վար կը կախվին
Հոմանիի դրասանգներ.
Եվ գիշերվան լոգարանները բոլոր
Կը քրրտրնին գրմբեթներովը իրենց՝
Որոնց ներքև կը թալկանա հեշտությունն
Ու կը զեղուն կոշարաները զրմուռս.
Ամփիթատրին մեջ, փրփրած,
Կ'հոսի արյունն, ու մեհյանին մեջ ծածուկ
Կը հոշոտվի հազածոն.
Բոզնոցներուն դրան առջև՝
Որոնց պագշոտ ծերպերեն
Թրխակարմիր շառայլներ դուրս կը նշողին՝
Կիներ պառկած՝ կ'ունկրնդրեն
Փողոցներեն անցնող ձայները դափին,
Ու տրոփագին ու զոշաքաղ ակնարկով
Կը խայտացնեն պորտերնին…
Բոլո՛ր, բոլո՛ր կ'ընեն
Սանդուռնական գինարբուքները՝ մինչև
Արշալույսին ծագիլն արյան քողերեն:
Պալատներուն մեջ՝ խրրա՛խ
Պողոտային վրա՝ շուրջպա՛ր,
Եվ մրթրնշաղ անկյուններուն մեջ, ավա՜ղ,
Ումպետ հոսումն ուղխորեն
Առնական գա՛ղջ սերմերուն:
Գերիներ, մերկ, ներբաններին այրելով,
Հրրաբորբոք կուպրին վրրա մայթերուն՝

Կը հայթայթեն, վազն ի վազ,
Խեժն այդ փրրփրած հրդեհին.
Ոմանք ըշտապ կը տանին
Համադամներ, ոմանք գինի՝ փարչերով.
Խառնածին մ'իր գոգին մեջ
Ծաղկի պսակները դիզած՝
Կ'երթա արբշիռ ճակատներն իր տերերուն
Արտախուրել բաղեղներով, վարդերով.
Եվ Պահլագուն մը հուժկու՝
Կույս մը շալկած մազերեն՝
Պատրիկներու ոսկեճամուկ սեղանին
Կը տանի զոհ մը իբրև…
Գինի, ռետին ու տրոփանք
Քաղաքին վրա, կը պանծացվին տավիղով.
Քաղաքի՞ն վրա, որ նըստած
Ափը ծովուն, զոհարազարդ բոզի պես,
Կը պըճնե ծոցն իր՝ ջահերով անհամար.
Եվ Քաղքին վըրա ո՞ւր ես դուն, Է՞րոս.
Խա՞յթն էր ոսկի փըքինիդ,
Որ շաղաշույտ այդ ժողովուրդը կըտղեց…
Ո՛չ, ո՛չ, Է՞րոս. տատրակի պես տարագիր
Այդ Ոստանեն խույս տըվիր:
Աստվածներու կըղզիին մեջ՝ այժըմ դուն
Լուսնկային հետ, քնքշորեն կը հըսկես
Սոխակներու բույնի՞ն վրա: